ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ

GOETHE INSTITUT

Sprache. Kultur. Deutschland.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության մշակութային ինստիտուտը՝ Հայաստանում Գյոթե ինստիտուտը, Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրի համար փնտրում է մոտիվացված ծրագրի ղեկավար մշակութային և շարունակական զարգացման ուղղվածությամբ: Աշխատանքը նախատեսվում է Գյոթե ինստիտուտում 2026թ. սեպտեմբերից մինչև 2029թ. փետրվար:

ՊԱՇՏՈՆԸ
Մշակութային ծրագրի ղեկավար

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՍՏԻՔԸ
Կես դրույք (շաբաթական 20 ժամ)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
Երևան, Հայաստան

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ
2026 թ. սեպտեմբեր – 2029 թ. փետրվար

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ
Ծրագիրը նպատակ ունի ամրապնդել ԵՄ-Հայաստան համագործակցությունը մշակույթի, երիտասարդության ներգրավվածության և շարունակական զարգացման նախաձեռնությունների միջոցով՝ միաժամանակ բարձրացնելով Եվրամիության գործունեության տեսանելիությունն ու հանրային ընկալումը Հայաստանում: Այն իրականացվում է ԵՄ պատվիրակության, EUNIC անդամների, ազգային շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սերտ համագործակցությամբ: Ծրագիրը համադրում է մշակութային էկոհամակարգի զարգացումը, երիտասարդության մասնակցությունը և շարունակական զարգացման վրա կենտրոնացած հանրային ներգրավվածությունը:

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Ծրագրի ղեկավարը պատասխանատու է մշակույթի և շարունակական զարգացման հետ կապված ծրագրային բոլոր գործողությունների գործառնական պլանավորման, համակարգման և իրականացման համար
Պաշտոնը աջակցում է նորահայտ արվեստագետներին և մշակութային նախաձեռնություններին, գրադարանների և համայնքային տարածքների միջոցով իրականացնում է մշակութային ծրագրեր, համագործակցում է տարբեր փառատոնների և մշակութային հարթակների հետ, ինչպես նաև աջակցում է շարունակական զարգացմանն ուղղված նախաձեռնությունները, որոնք կապում են մշակութային դերակատարներին բնապահպանական և քաղաքացիական հասարակության գործընկերների հետ: Պաշտոնը նաև վերահսկում է դրամաշնորհային ծրագրերի, հանրային միջոցառումների, ֆորումների և շահառու գործընկերությունների կառավարումը՝ ապահովելով լայն հանրային ներգրավվածություն և ծրագրի տեսանելիություն:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի կառավարում և համակարգում

- Ծրագրի պլանավորում, համակարգում և իրականացում
- Արդյունքների և փուլերի ճշգրիտ ժամանակացույցի ապահովում
- Ծրագրի գործընկերների և շահառուների համակարգում

Դրամաշնորհային ծրագրի կառավարում

- Բաց հայտերի կառավարումը, ընտրության գործընթացների համակարգումը, պայմանագրերի կնքումը և աջակցվող նախագծերի մշտադիտարկումը
- Աջակցություն ցուցաբերել մասնակիցներին ծրագրի իրականացման ողջ ընթացքում

Գործընկերության և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

- Գործընկերների և շահագրգիռ կողմերի հետ կապերի ամրապնդում
- Հեշտացնել համագործակցությունը և փորձի փոխանակումը ոլորտների ու հաստատությունների միջև

Միջոցառումների կազմակերպում և իրականացում

- Հանրային միջոցառումների, ֆորումների, փոխանակումների և տեսանելիության ապահովման աշխատանքների համակարգում
- Ապահովել ծրագրի աշխատանքի բարձրորակ իրականացումը

Ծրագրի տեսանելիության ապահովում և հաշվետվությունների պատրաստում ու ներկայացում

- Հաղորդակցման գործընթացների աջակցություն և տեսանելիության խթանում
- Ծրագրի արդյունքների հավաքագրում և վերլուծություն
- Մշտադիտարկման և գնահատման գործընթացների աջակցություն

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Պարտադիր է

- Համալսարանական կրթություն մշակութային կառավարման, արվեստի ոլորտում վարչարարության, շարունակական զարգացման, հասարակական գիտությունների, միջազգային հարաբերությունների կամ հարակից ոլորտներում:
- Առնվազն 5 տարվա համապատասխան մասնագիտական փորձ նախագծերի կառավարման ոլորտում:

- Ապացուցված փորձ մշակութային, համայնքային կամ շարունակական զարգացման հետ կապված նախագծերի իրականացման մեջ:
- Փորձ հանրային միջոցառումների, ֆորումների, փառատոնների կամ դրամաշնորհային ծրագրերի կազմակերպման մեջ:
- Գերազանց գիտելիքներ Հայաստանի մշակութային և ստեղծագործական ոլորտներում
- Համակարգման և մասնակիցների հետ աշխատանքի հմտություններ
- Գերազանց հայերենի և լավ անգլերենի տիրապետում:

Ցանկալի է

- Փորձ դրամաշնորհային ծրագրերի և բաց հայտերի կառավարման մեջ
- Փորձ տարբեր ոլորտների և շահառուների միջև համագործակցության խթանման մեջ
- Գոյություն ունեցող ցանց մշակութային կազմակերպությունների, փառատոնների, ՀԿ-ների, գրադարանների և շարունակական զարգացման դերակատարների շրջանում:
- Հանրային ներգրավվածության, մասնակցության և հանդիսատեսի զարգացման փորձ
- Ծանոթություն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերին և մշակութային համագործակցության նախաձեռնություններին

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախագծերի պլանավորում և իրականացում
- Գործընկերության զարգացում և մասնակիցների կառավարման փորձ
- Հաղորդակցման և համագործակցության խթանման հմտություններ
- Կազմակերպչական և համակարգման հմտություններ
- Միաժամանակյա առաջադրանքների արդյունավետ կազմակերպում
- Խնդիրների լուծման և ճկուն պլանավորման փորձ
- Բազմամշակութային միջավայրում աշխատելու կարողություն

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- Ինքնակենսագրություն (առավելագույնը 4 էջ)
- Մոտիվացիոն նամակ (առավելագույնը 2 էջ), որտեղ ներկայացվում է թեկնածուի մոտիվացիան տվյալ պաշտոնի համար և ցույց է տրվում, թե ինչպես են նրա որակավորումները և փորձը համապատասխանում պաշտոնի պահանջներին
- Երկու մասնագիտական հղումների (ռեֆերենսների) կոնտակտային տվյալներ

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է 2026թ. օգոստոսի 23-ը: Խնդրում ենք դիմումներն ուղարկել անգլերեն լեզվով միաժամանակ **hasmik.muradyan@goethe.de** և **jan-tage.kuehling@goethe.de** հասցեներին:

Խնդրում ենք որպես նամակի թեմա նշել
Project Manager – Culture & Sustainability

Տեղում անցկացվող հարցազրույցները նախատեսված են օգոստոսի 27-ին և 28-ին:

Խնդրում ենք նկատի ունենալ
Հայտարարված հաստիքը կախված է արտաքին ֆինանսավորման բարեհաջող հաստատումից: Պայմանագիր կնքվելու է միայն հաստատված ֆինանսավորման դեպքում: